66

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎ. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ՝
Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.02. 2022 թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԷԹԱՐՅԱՆԻ՝ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՌԵՖԼԵՔՍԻԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԹՈՄԱՍ ՄԱՆԻ ԵՎ ԳՅՈՒՆԹԵՐ ԳՐԱՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)» ***Ժ.01.07*** **«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին**

Ե.Հ.Էթարյանի «Գրականության ինքնառեֆլեքսիան գերմանական գրականության ռոմանտիզմի դարաշրջանից մինչ արդի գրականություն (Թոմաս Մանի և Գյունթեր Գրասի ստեղծագործությունների հիման վրա)» դոկտորական ատենախոսությունը նվիրված է մի թեմայի հետազոտության, որն առնչվում է ժամանակակից գրականագիտության և գեղագիտության մի շարք արմատական խնդիրների: Ներկա ատենախոսության թեման **նոր** է և **արդիական**՝ ժամանակակից գրականագիտական ուսումնասիրությունների համատեքստում, քանի որ գիտական ուսումնասիրությունն անցկացվել է տարբեր մակարդակներում, այն է՝ Թ. Մանի և Գ. Գրասի ինչպես ողջ ստեղծագործության, այնպես էլ այս գրողների առանձին գրական երկերի վերլուծությամբ, և ամենակարևորը, աշխատանքն ընդգրկում է գերմանական գրականության երկու դարաշրջանների գեղարվեստական քննություն՝ գերմանական գրականության նշանավոր այլ ներկայացուցիչների հետ ստեղծագործական տարբեր աղերսների համեմատությամբ:

Ե. Էթարյանի ուսումնասիրությունն արժևորվում է նաև այն փաստով, որ աշխատանքում արծարծված խնդիրը հայ գրականագիտության մեջ առաջին անգամ է արժանանում նման համապարփակ վերլուծության: Թեմայի բարդությունը և բազմավեկտորությունը ենթադրում են ոչ միայն տեսական, այլև գործնական գիտելիքի հարուստ պաշար, որի առկայությունն աներկբա է աշխատանքում:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և գրականության ցանկից:

Ներածության մեջ Ե. Էթարյանը մանրամասնորեն անդրադառնում է աշխատանքի նպատակին և մեթոդներին՝ «ինքնառեֆլեքսիա» հասկացության բնորոշմանը՝ տեսական և պատմական հարացույցում, ներկայացնում ինքնառեֆլեքսիային հարակից «մետահորինվածք» հասկացությունը և տալիս անհրաժեշտ մեկնաբանություններ:

Ուսումնասիրության **առաջին գլխում՝** «**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՌԵՖԼԵՔՍԻԱՆ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՅԹԸ»,** ներկայացվում է գրականության ինքնառեֆլեքսիայի հասկացությունը պատմական հարացույցում, մասնավորապես անդրադարձ է կատարվում Ֆրիդրիխ Շլեգելի, Նովալիսի, Է.Թ.Ա. Հոֆմանի ինքնառեֆլեքսիայի մասին ըմբռնումներին, այնուհետև լուսաբանվում են Թոմաս Մանի և Գյունթեր Գրասի երկերի ռոմանտիզմի հետ առնչությունները: Այստեղ ուշագրավ ենք համարում այն պնդումը, համաձայն որի ռոմանտիզմի գրականության շրջանակներում արդեն իսկ նշմարվում էր և որպես պահանջ էր ներկայացվում ժամանակակից գրականությանը բնորոշ ինքնառեֆլեքսիայի միտումը: Արդ, ատենախոսության նպատակն է՝ ցույց տալ (վաղ) ռոմանտիկական հեգնանքի՝ որպես բոլոր առումներով ինքնառեֆլեքսիվ պատումի հայեցակարգի դրսևորումը Թոմաս Մանի և Գյունթեր Գրասի ստեղծագործության մեջ: Այս գլխում նաև վերլուծվում է Է.Թ.Ա. Հոֆմանի «Ոսկե կճուճը» հեքիաթը, որում արտապատկերվում է ռոմանտիկական իրոնիայի առկայացումը՝ կոնկրետ տեքստի հիման վրա, ինչպես նաև իրացվում է Նովալիսի «աշխարհի ռոմանտիկացման» (էջ 34) հայեցակարգը:

Երկրորդ գլխում՝ «**ԱՐՎԵՍՏԻ ԻՆՔՆԱՌԵՖԼԵՔՍԻԱՆ ՈՒ ԻՆՔՆԱԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՄՈԴԵՌՆԻԶՄԻ ԵՎ ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ՝ ԸՍՏ ԹՈՄԱՍ ՄԱՆԻ ԵՎ ԳՅՈՒՆԹԵՐ ԳՐԱՍԻ ԵՐԿԵՐԻ»,** ուսումնասիրվում են

ինքնառեֆլեքսիայի խնդիրները մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի գրականության շրջանակներում և կատարվում տեսական անհրաժեշտ մեկնաբանություններ:

Այսպես, ուսումնասիրվում են «մոդեռնիզմ» գաղափարի պատմական ակունքները, հատուկ անդրադարձ է կատարվում Ֆրիդրիխ Շիլլերի գեղագիտական տեսությանը, որը նվիրված է արվեստի դերի լուսաբանմանը ժամանակակից հասարակության մեջ: Այս գրողի ընտրությունը պայմանավորված է վերջինիս ակնառու ազդեցությամբ թե՛ Մանի, թե՛ Գրասի երկերի վրա: Ֆրիդիխ Նիցշեին՝ որպես մոդեռնիզմի ամենավառ ներկայացուցիչ-փիլիսոփային, նվիրված մասում խոսվում է նրա կարևոր դերի մասին Թոմաս Մանի բանարվեստի և ստեղծագործության համատեքստում: Այս գլխի շրջանակներում գրական մոդեռնզիմը ներկայացվում է որպես դարաշրջան և գեղագիտական գիտակցություն, այնուհետև քննարկվում են լեզվի և ճանաչողության ճգնաժամի հետ կապված հարցերը: Գրականության և ստեղծագործական գործընթացի ինքնառեֆլեքսիան այստեղ ներկայանում են որպես մոդեռնիզմի բաղադրիչներ:

Հատկապես հետաքրքիր է աշխատության մեջ պարոդիայի և պոստմոդեռնիզմի միջև կապի լուսաբանումը, որի հիմքում ընկած են գրականության տեսաբան Լինդա Հաչիենի դրույթները: Ատենախոսը պարոդիան ուսումնասիրում է որպես «գրելաձև» և ոչ թե որպես ժանր, ընդ որում՝ ծաղրերգական գրելաձևի մասին խոսելիս, կրկին անդրադառնում է Ֆրիդրիխ Նիցշեին, քանի որ նա հաճախակի է խոսում պարոդիայի երկակի բնույթի մասին: Աշխարհի հեռանկարային ընկալումը, մասնատվածության գաղափարը ատենախոսության այս գլխի կենտրոնական հասկացություններից են: Բացի գրելաձևից, պարոդիան ներկայացվում է նաև որպես ոճական միջոց, գրական էվոլյուցիայի արտահայտում, յուրօրինակ գիտակցություն, մետագրականության հիմքում ընկած երևույթ, մետատեքստ և, ի վերջո, որպես ռեֆլեքսիայի միջոց:

Այս գլխի տեսական արժեքը համարում ենք այն, որ վերստին բացահայտվում են բազմաթիվ ընդհանրություններ, որոնք մոդեռնիզմը և պոստմեդեռնիզմը կապում են մի կողմից ռոմանտիզմի, մյուս կողմից՝ նշված գրողների ստեղծագործությունների հետ: Բնականաբար, Թ. Մանի երկերն առավելապես աղերսվում են մոդեռնիզմի, իսկ Գ. Գրասի երկերը՝ պոստմոդեռնիզմի հետ:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ ***ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՌԵՖԼԵՔՍԻԱՆ «ԴՈԿՏՈՐ ՖԱՈՒՍՏՈՒՍ» ԵՎ «ԱՆԵԶՐ ԴԱՇՏ» ՎԵՊԵՐՈՒՄ»,*** տրոհվում է երկու

ծավալուն ենթագլուխների, մասնավորապես՝ «Դոկտոր Ֆաուստուս» և «Անեզր դաշտ» վեպերի քննությամբ, ընդ որում, վերլուծությունն ընթանում է երեք հարթություններով քննության է առնվում վեպերում գրականության ինքնառեֆլեքսիան՝ պատումի, լեզվի և երկի գեղարվեստականության տեսանկյուններից: Վեպերի քննության սկզբում ներկայացվում են երկերի ստեղծման պատմությունները, ինչպես նաև նրանց բազմաշերտությունը:

Ուշարժան է ատենախոսի այն պնդումը, որ ինքնառեֆլեքսիայի ուսումնասիրված մակարդակների դեպքում (պատումի ինքնառեֆլեքսիա, լեզվի ինքնառեֆլեքսիա, գեղարվեստական ստեղծագործության ինքնառեֆլեսիա) գործ ունենք պատմականորեն տարբեր ժամանակաշրջանների հետ: *Գեղարվեստական ստեղծագործության ինքնառեֆլեսիան* ուղղորդում է դեպի գերմանական ռոմանտիզմի դարաշրջան, մասնավորապես դեպի այն ժամանակաշրջանը, երբ իրականության գաղափարը թեական էր դարձել, և սուբյեկտիվությունը նոր-նոր էր հայտնաբերվել: *Լեզվի և նրա սահմաններին ինքնառեֆլեքսիան* վերաբերում է 20-րդ դարասկզբին: Դա արտահայտվում է նրանով, որ իրականության արտացոլումը լեզվական միջոցներով կասկածի է ենթարկվում: 18-րդ դարում լեզվի ինքնառեֆլեքսիան դեռևս գրականության խնդիր չէր, քանի որ այդ ժամանակահատվածում հաստատվում էր բանաստեղծական լեզուն՝ տարանջատվելով գիտական լեզվից: *Պատումի ինքնառեֆլեքսիան* ներկայացվում է որպես լեզվական ճգնաժամի արդյունք և բնութագրում է մոդեռնիզմի շրջանը՝ պատումի ավարտի իր կանխադրույթով: Ատենախոսը նաև փաստում է, որ գրականության ինքնառեֆլեքսիայի բովանդակայն երեք մակարդակներն ունեն մեկ ընդհանուր գիծ՝ նրանք ռեֆլեքսիայի «վաղնջական մեղսագարծության» արդյունք են: Ուսումնասիրության շրջանակներում այս պնդումը ներկայացվում է դրախտի մոտիվի, պատմության եռաստիճան մոդելի, Ատլանտիդայի մոտիվի («Ոսկե կճուճը»), Հայնրիխ Քլայստի «Խամաճիկների թատրոնի մասին զրույցի» հիման վրա, Ֆրիդրիխ Շիլլերի՝ միամիտ ու սենտիմենտալ բանաստեղծների տիպերի տարբերակման միջոցով, ընդհուպ՝ «Դոկտոր Ֆաուստուս» և «Անեզր դաշտ» վեպերը:

Եզրակացության մեջ ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները, համակարգվել և ձևակերպվել են կարևորագույն դրույթները:

Ամփոփելով կցանկանայինք նշել, որ կատարվել է հսկայածավալ աշխատանք՝ հայ գրականագիտության մեջ առաջին անգամ համակարգային քննության նյութ է դարձել գրականության ինքնառեֆլեքսեիայի հասկացույթը և դրա պատմությունը՝ վաղ ռոմանտիզմից մինչև մեր օրերը՝ ուսումնասիրության դիտարկման կիզակետում ունենալով գրական ինքնառեֆլեքսիայի խնդիրը Թ.Մանի և Գ. Գրասի երկերում և աշխատություններում:

Չափազանց դրվատելի է ատենախոսի կողմից առարկայի վերաբերյալ արտահայտած բազմազան տեսակետների ներկայացումը: Աշխատանքն աչքի է ընկնում տեսական և գործնական նյութի գերազանց վերլուծությամբ, կուռ և համապարփակ շարադրանքով, հարցադրումների հստակ պարզաբանումներով և գիտական պատշաճ ոճով: Ատենախոսի կողմից արված եզրակացությունները բխում են հետազոտության նախնական վարկածի առաջադրած խնդիրներից: Մշակված վերլուծական համակարգը և մեթոդները ապացուցում են իրենց արժանահավատությունը:

Ե. Էթարյանին վստահաբար հաջողվել է ներկայացնել ուսումնասիրության առանցք հանդիսացող թեմայի պատմությունը, մեթոդաբանական հիմքը, պարզաբանել գրականության ինքնառեֆլեքսիայի խնդրի ուսումնասիրության հարցը տարբեր մակարդակներում՝ հմտորեն քննության առնելով գրականության ինքնառեֆլեքսիան վաղ ռոմանտիզմից մինչև մոդեռնիզմ և պոստմոդեռնիզմ, ինչպես նաև վերլուծել և վեր հանել ինքնառեֆլեքսիայի ձևերը Թոմաս Մանի և Գյունթեր Գրասի ստեղծագործություններում:

Կարող ենք համոզվածությամբ նշել, որ Ե. Էթարյանը հրապարակային պաշտպանության է ներկայացնում մի աշխատանք, որը և՛ գիտական շրջանառության մեջ դրված նյութի, և՛ ուսումնասիրության թեմայի ընտրության, և՛ կատարման տեսանկյունից գրականագիտության համար բացառիկ արժեք ունի:

Ելենա Էթարյանի ատենախոսությունը, անկասկած, նոր խոսք է հայ գրականագիտության մեջ: Այն վստահաբար գիտական արժեքավոր ներդրում է նաև արտասահմանյան, հատկապես՝ գերմանական գրականագիտության մեջ: Դրա վկայությունն են արտասահմանյան հեղինակավոր հանդեսներում, ինչպես նաև Scopus և Web of Science գիտաչափական շտեմարաններում տպագրված հոդվածները:

Այնուամենայնիվ, Ելենա Էթարյանի ատենախոսությունն առավել կատարյալ տեսնելու ցանկությունից ելնելով հարկ ենք համարում նշել, որ գերմանական գրականագիտական

մտքից զատ աշխատանքում ներառվեին նաև թեմային առնչվող ռուս և հայ գրականագետների աշխատություններ:

Ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է դոկտորական ատենախոսություններին ներկայացված պահանջներին, ինչն էլ հիմք է տալիս մեզ միջնորդել ԵՊՀ-ում գործող 066 մասնագիտական խորհրդի առջև՝ շնորհելու Ելենա Հովհաննեսի Էթարյանին՝ իր հայցած բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը՝ Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ:

Ատենախոսությունը քննարկվել է 2022թ. փետրվարի 11-ին ամբիոնի նիստում, արձանագրություն N 6.

Նիստին մասնակցել են՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի վարիչ՝ բ.գ.դ., պրոֆեսոր Ն.Խաչատրյանը, բ.գ.դ., դոցենտ Ս.Ս.Աբրահամյանը, բ.գ.թ., դոցենտներ Կ.Հ.Գուլանյանը, Ե.Հ.Էթարյանը, Գ.Դ.Վարդումյանը, Ս.Վ.Ապրեսովան, Ա.Գ.Ջանիկյանը, Հ.Ա.Այվազյանը, Ի.Կ.Պողոսյանը, Կ.Հ.Մարտիրոսյանը, Հ.Ա.Եղիազարյանը, Ա.Ա.Խառատյանը, Ա.Հ.Չուլյանը, դոցենտ Ռ.Ռ. Գևորգյանը:

Համաշխարհային գրականության և
մշակույթի ամբիոնի վարիչ՝ **պրոֆ. Ն.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
պրոֆ. Ն.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ստորագրությունը՝
Վ. Բրյուսովի անվ.պետական համալսարանի
գիտքարտուղար **Հ. ՓԻԼԱՎՋՅԱՆ**